# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Փրիթի Ուեյ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/328 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Stolline | Stolline | Երկհարկանի մահճակալի կոնստրուկցիան ամուր է, հուսալի և չի սպառնում երեխայի անվտանգությանը: Հումքը, որից պատրաստվելու է մահճակալը բնական ամուր փայտի և լամինատի համակցությունից է, էկոլոգիապես մաքուր, հղկված և լաքապատ, նախընտրելի է փայտի բաց երանգները: Մահճակալը բարձր կողամասերով է, առկա է սանդուղք, սանդուղքի ունի բռնակներ՝ բարձրանալու համար (չժանգոտվող մետաղական կամ այլումինե կցամասերով): Մահճակալի չափսերը՝ 250սմx215սմx85սմ: Հարկերի միջև եղած բարձրությունը բավականաչափ է, որպեսզի և երեխան և մեծահասակը կարողանա նստել: Մահճակալի առաջին հարկի տակ առկա է դարակներ երկու հատ՝ բռնակներով և համակցված պահարան: Մահճակալը ունի 2 օրթոպեդիկ ներքնակ /մատրաս/, որի չափսերը համապատասխանում են երկհարկանի մահճակալի կոնստրուկցիայի չափսերին: Ներքնակի /մատրասի/ բարձրությունը 19սմ և չի գերազանցում կողամասերը: Մահճակալը ունի կցված պահարան՝ չափսերը 50սմx80սմx180սմ: Պահարանը ունի դուռ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ներսում 2 դարակներ: Դարակներից մեկի բարձրությունը` 40սմ, մյուսինը` 140սմ: Պահարանում առկա է ձող` չժանգոտվող հումքից` հագուստը կախիչով կախելու համար: Երաշխիքը 12 ամիս, երաշխիքի կտրոնի առկայությունը պարտադիր է: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մահճակալի փոխադրումը և տեղադրումը շահառուի բնակարան կիրականացվի մատակարարի կողմից: Մահճակալը շահառուի հասցե մատակարարվում է քանդված վիճակում` կցամասերով, հավաքվում է շահառուի հասցեում, կցամասերը ստվարաթղթե են գործարանային փաթեթավորմամբ, նոր և չօգտագործված: Նախնական հայտը կներկայացվի էլեկտրոնային փոստի միջոցով: *Բոլոր ապրանքները նոր են, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Прити Уэй в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/328 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | |